ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Վերստին դիմում ենք գրչի հավերժացնող միջամտությանը՝ արձանագրելու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Կոմիտասի անվան դահլիճում, սույն թվականի հոկտեմբերի 31-ին տեղի ունեցած ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը: Քննող հանձնախումբը, գլխավորությամբ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ինչպես միշտ, այսօր ևս ճեմարանավարտ սարկավագներից ակնկալում էր ստանալ հայ հոգևորականին պատշաճող ավարտական թեզեր:

Հուրախություն ամենքիս, պաշտպանությանը ներկայացած բոլոր սարկավագներն էլ քննական հանձնաժողովի դատին հանձնեցին հաջողված, ճեմարանական չափանիշներով գրված ավարտաճառեր, որոնցից մի քանիսը, փոքր-ինչ ճշգրտումներից ու լրացումներից հետո, արժանի են հրատարակության:

Փառք Աստծո, հայ եկեղեցականի արդյունաշատ գրիչն այսօր էլ շարունակում է նոր շունչ ու ոգի հաղորդել հայ հավատացյալին՝ իր խոսքը գրի ճանապարհով հասցնելով ընթերցասեր հանրությանը:

Աղոթենք առ Աստված, որ Մայրավանքում արդեն իսկ իրենց ծառայությանը լծված այս վեց սարկավագները մշտապես հավատարիմ մնան մեր նախնիներից մեզ ժառանգություն հասած գրին ու գրականությանը, որովհետև հայ գրքի շնորհիվ ենք ինքներս մեզ ճանաչում և դրանով իսկ ճանաչվում աշխարհից: Ճիշտ այս գիտակցությամբ էր երանահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը վեր հանում հայ գրքի արժեքը՝ ասելով. «Կամ աշխարհէն կը գերուինք ու կը տարուինք, և կամ աշխարհին մէջ, աշխարհին հետ ըլլալով հանդերձ, կը պահենք մեր հայութեան տիրական ինքնութիւնը հայ գիրքի հսկայազօր ներգործութեամբը, որովհետև անմահ բանաստեղծին՝ Պարոյր Սևակին անմահական բառերով.

Եթէ տիրել ենք, լոկ մեր գրքերով»:

Այս պաշտպանությանն իրենց ավարտաճառերը ներկայացրեցին և հանձնաժողովի դրական գնահատականին արժանացան.

Խաչիկ սարկավագ Ավետիսյան, «Հովհաննես Երզնկացի-Ծորնորեցի վարդապետ» (ղեկավար՝ Գնել Գրիգորյան).

Արտյոմ սարկավագ Ավետիսյան, «Ղարաքիլիսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցին և ծխական դպրոցը» (ղեկավար՝ Վարդան Դևրիկյան).

Նարեկ սարկավագ Հակոբյան, «Նոր Ջուղան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը» (ղեկավար՝ Հրաչ Միրզոյան).

Հովհաննես սարկավագ Բաղալյան, «Պողոս վարդապետ Տարոնացու «Ընդդէմ Թէոպիստեայ» թղթի աստվածաբանությունը» (ղեկավար՝ Հակոբ Քյոսեյան).

Կարեն սարկավագ Քարամյան, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Շահամիրյանները» (ղեկավար՝ Պողոս Խաչատրյան).

Ծերուն սարկավագ Մկրտչյան, «Հոգեգալստական շարժումը» (ղեկավար՝ Տ. Ղևոնդ քահանա Մայիլյան):

ԾԵՐՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԿՐՏՉՅԱՆ